



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

## ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### նախընտրական հեռուստաբանավեճերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում կատարված վերջին փոփոխությունները պարտավորեցնում են հանրային հեռուստաընկերությանը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպել հեռուստաբանավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճերը հեռարձակվում են ուղիղ եթերով: ([«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, հոդված 13](#)):

Նույն օրենքում սահմանված է նաև. «Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական բանավեճերի քանակը չպետք է պակաս լինի երեքից՝ յուրաքանչյուրն առնվազն 90 րոպե տևողությամբ, իսկ բանավեճերից առնվազն մեկին պետք է հրավիրվեն միայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների առաջին համարի թեկնածուները: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) պետք է հնարավորություն ունենա մասնակցելու հավասար թվով նախընտրական բանավեճերի»: Սույն կարգավորումը, կիրառելի է արդեն 2021 թվականի ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության համար:

2018 թվականի դեկտեմբերին կայացած արտահերթ ընտրությունների քարոզչության շրջանում հանրայինն արդեն կազմակերպել է մեծ բանավեճ՝ այն ժամանակ ընտրություններին մասնակցող 11 քաղաքական ուժերի առաջին համարների մասնակցությամբ: Այդ բանավաճը բավականին դրական արձագանքներ ունեցավ ինչպես հեռուստադիտողների, այնպես էլ միջազգային եւ տեղական դիտորդների, փորձագետների շրջանում:

Մակայն հիմա՝ նախորդ ԱԺ ընտրություններից երկուսուկես տարի անց, իրավիճակը բոլորովին այլ է: Հանդուրժողականության համեմատաբար հանգիստ մթնոլորտը, որ կար այն ժամանակ, այժմ համարյա ամբողջովին բացակայում է, քաղաքական ուժերը

միմյանց քննադատելու, ավելին՝ վարկաբեկելու միջոցների մեջ խտրականություն չեն դնում:

Հասարակության մեջ լարվածությունը, պայմանավորված մանավանդ վերջին Արցախյան պատերազմում կրած պարտությամբ եւ երկրի տնտեսական զարգացման ակնհայտ նահանջով, հասել է գագաթնակետին: Եվ նման պայմաններում պետք են լավագույնս մշակված կանոններ, որպեսզի բանավեճերը ոչ թե խորացնեն լարվածությունը, այլ, ընդհակառակը, մեղմեն այն՝ քաղաքական ուժերին հնարավորություն տալով առավելագույնս ներկայացնելու իրենց տեսակետները:

Բանավեճերը հաջող անցկացնելու համար էլ անհրաժեշտ են հստակ կանոնների եւ բոլոր մասնակիցների նկատմամբ անաչառ ու հավասարակշռված մոտեցման, նրանց հավասար հնարավորությունների եւ իրավունքների պահպանում:

Երեւանի մամուլի ակումբը ստորեւ ներկայացնում է բանավեճերի կազմակերպան եւ անցկացման կանոնների իր առաջարկությունները.

1. Քանի որ ըստ օրենքի «բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստառնկերությունը» (ՀՀՀ), ուստի ամենից առաջ հարկ է, որ ՀՀՀ ղեկավարությունը ԿԸՀ-ի եւ ՀՌՀ-ի մասնակցությամբ քաղաքական ուժերի հետ անցկացնի խորհրդակցություններ՝ համաձայնեցնելու համար բանավեճերի ձևաչափը, թեմատիկան եւ ժամանակացույցը:

2. Հաշվի առնելով պաշտոնական քարոզչության կարճ ժամանակահատվածը, քաղաքական ուժերի քանակը (26 կուսակցություն եւ դաշինք), ինչպես նաեւ՝ նախորդ բանավեճերի փորձը՝ նպատակահարմար է կազմակերպել 4-5 թեմատիկ բանավեճ՝ հրավիրելով ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին, վիճակահանությամբ նրանց բաժանելով 4 խմբի (երկուսը 7-ական, երկուսը՝ 6-ական ներկայացուցիչներով): Բանավեճերի օրն ու ժամը նույնպես հարկ է որոշել վիճակահանությամբ, իսկ վերջինի անցկացումը կարող է կազմակերպվել (կամ փոփոխվել)՝ հաշվի առնելով բանավեճերին մասնակցելու քաղաքական ուժերի պատրաստակամությունը:

3. Եթե այս կամ այն քաղաքական ուժը հրաժարվում է մասնակցել վիճակահանությանը եւ այս կամ այն թեմայով բանավեճին, ապա հաղորդավարներն այդ մասին տեղեկացնում են յուրաքանչյուր հաղորդման սկզբում:

4. Վիճակահանությանը մասնակցելուց հետո նկարահանմանը չներկայանալու դեպքում նույնպես այդ մասին իրազեկվում է հեռուստադիտողներին, համապատասխան քաղաքական ուժին հատկացված տեղը պահպանվում է, սակայն այդ դատարկ մնացած տեղը պետք է երեւա բացառապես ընդհանուր պլանով կադրերում:

5. Միջազգային փորձը հուշում է, որ առավել արդյունավետ է բանավեճերի այն ձևաչափը, որի դեպքում հիմնական վարողից բացի մասնակցում են նաեւ մի քանի այլ՝ մեծ լսարան ունեցող ՉԼՄ-ների ներկայացուցիչներ: Հայաստանի դեպքում նպատակահարմար է հրավիրել 6 համապետական հեռարձակողների (ՀՀՀ, «Արմենիա»,

«Շանթ», «Երկիր մեդիա», «Կենտրոն», ԱԹՎ) ներկայացուցիչների: Նրանցից մեկի հրաժարվելու դեպքում, նրա տեղը լրացվում է համապետական լսարան ունեցող եւ համապատասխան հայտ ներկայացրած այլ ՁԼՄ-ի հաշվին՝ վիճակահանությամբ: Բանավեճերում ներգրավված ՁԼՄ-ները պետք է հնարավորություն ունենան փոխելու իրենց ներկայացուցիչներին՝ կախված բանավեճի թեմայից: Լրագրողների անունները պաշտոնապես ներկայացվում են Հանրային հեռուստարձևությունը՝ տվյալ ՁԼՄ-ի ղեկավարի ստորագրությամբ նամակով: Բանավեճին մասնակցող լրագրողները պետք է իրենց ՁԼՄ-ի կողմից լիազորված լինեն անհրաժեշտության դեպքում փոխելու իրենց հարցի բովանդակությունը:

**6.** Օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր բանավիճային հաղորդում պետք է լինի առնվազն 90 րոպե: Տեւողությունը կարող է ավելին լինել՝ կախված մասնակիցների թվից: Յուրաքանչյուր հաղորդման տեւողությունը հաշվարկվում է հետեւյալ բանաձևով. 6 (հարց տալու հնարավորություն ունեցող լրագրողների թիվը)\*X (քաղաքական ուժերի ներկայացուցիչների թիվը)\*2 (յուրաքանչյուր պատասխանին հատկացվող ժամանակը) + լրագրողներին հատկացվող ժամանակը:

**7.** Ստուդիայում քաղաքական ուժերի ներկայացուցիչները դասավորվում են ըստ ԿԸՀ-ում տվյալ ընտրությունների համար անցկացված վիճակահանության ժամանակ ստացած համարների: Իսկ հարցերին պատասխանելու հերթականությունը պիտի փոփոխվի հետեւյալ կերպ. առաջին հարցին մասնակիցները պատասխանում են ձախից աջ, երկրորդին՝ աջից ձախ, երրորդին՝ կենտրոնից դեպի աջ, չորրորդին՝ կենտրոնից դեպի ձախ, հինգերորդին՝ աջից ձախ, վեցերորդին՝ ձախից աջ:

**8.** Լրագրողների հարցերը պետք է համապատասխանեն բանավեճի թեմատիկային եւ բացառեն քաղաքական գնահատականներն ու հայտարարությունները: Ցանկալի է ուղիղ եթերից անմիջապես առաջ կազմակերպել քննարկում լրագրողների, վարողի եւ խմբագրի/պրոդյուսերի մասնակցությամբ՝ հարցերի կրկնությունից եւ թեմայից շեղումներից խուսափելու համար: Անհամաձայնությունների դեպքում որոշումն ընդունվում է քվեարկությամբ, որի ժամանակ 6 ՁԼՄ ներկայացուցիչներից յուրաքանչյուրն ունի մեկ ձայն: Ընդհանուր պայմանավորվածությունները խախտելը կամ հարցերի բովանդակությունը քաղաքական ուժերի ներկայացուցիչներին փոխանցելը պետք է հանգեցնի տվյալ ՁԼՄ-ին նախազգուշացման, կրկնվելու դեպքում՝ բանավեճերին հետագա մասնակցությունից զրկելուն:

**9.** Վարողի բացման խոսքը պետք է բացառապես տեղեկատվություն լինի տվյալ բանավեճի էության, թեմատիկայի վերաբերյալ եւ համառոտ ներկայացնի մասնակիցներին: Այդ բացման խոսքը չպետք է գերազանցի երեք րոպեն: Եզրափակիչ խոսքը եւս պիտի զուտ տեղեկատվական լինի եւ չպարունակի գնահատականներ: Սրա տեւողությունը մեկուկես րոպեն չպետք է գերազանցի:

**10.** Ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների ընտրական ցուցակների առաջին համարների բանավեճը պետք է անցկացվի առանձին ձեւաչափով: Բանավեճի կազմակերպմանը/անցկացմանը ներգրավված վեց ՁԼՄ-ների ներկայացուցիչներն անմիջապես եթերից առաջ կորոշեն այն երեք թեմաները, որոնց վերաբերյալ բանավեճի մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց նախընտրական

ծրագրերի բովանդակությունը: Լրագրողների որոշումն ընդունվում է վերը նշված կանոններով: Թեմաների ձեռակերպումները ներկայացնելը պատվիրակվում է վարողին: Ընդամենը, լրագրողների անուններն ու նրանց ներկայացրած ՁԼՄ-ները նույնպես հրապարակվում են: Բացի հարցերին պատասխանելուց, քաղաքական ուժերի առաջնորդներին հնարավորություն է տրվում հանդես գալու եզրափակիչ հայտարարությամբ: Հարցերի պատասխաններն ու եզրափակիչ հայտարարությունը չպետք է երկու թուղթից ավելի տեւեն: Վարողի բացման խոսքը պետք է բացառապես տեղեկատվություն լինի բանավեճի էության, թեմատիկայի վերաբերյալ եւ համառոտ ներկայացնի մասնակիցներին: Այդ բացման խոսքը չպետք է գերազանցի երեք թուղթ: Եզրափակիչ խոսքը եւս պիտի զուտ տեղեկատվական լինի եւ չպարունակի գնահատականներ: Սրա տեւողությունը մեկուկես թուղթն չպետք է գերազանցի:

**11.** Եթե այս կամ այն քաղաքական ուժը հրաժարվում է եզրափակիչ բանավեճին մասնակցելուց, ապա վարողն այդ մասին լսարանին տեղեկացնում է հաղորդման սկզբում: Քաղաքական ուժի ներկայացուցչին հատկացված տեղը պահպանվում է, սակայն դատարկ մնացած տեղը պետք է երեւա բացառապես ընդհանուր պլանով կադրերում:

**12.** Յուրաքանչյուր հաղորդման տեւողությունը հաշվարկվում է նրան մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչների թվին համապատասխան, հետեւյալ բանաձեւով.  $3 (\text{թեմաների ձեռակերպում}) * X (\text{քաղաքական ուժերի ներկայացուցիչների թիվը}) * 2$  (յուրաքանչյուր պատասխանին հատկացվող ժամանակը) + վարողին հատկացվող ժամանակը:

**13.** Ստուդիայում քաղաքական ուժերի ներկայացուցիչները դասավորվում են ըստ ԿԸՀ-ում տվյալ ընտրությունների համար անցկացված վիճակահանության ժամանակ ստացած համարների: Քաղաքական ուժերի ներկայացուցիչները հարցերին պատասխանում/հայտարարություններ են անում հետեւյալ հերթականությամբ. առաջին թեման՝ ձախից աջ, երկրորդը՝ աջից ձախ, երրորդը՝ կենտրոնից դեպի աջ, եզրափակիչ հայտարարություն՝ կենտրոնից դեպի ձախ:

**14.** Բանավեճին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները պետք է քննարկումները ծավալեն էթիկական ստանդարտների շրջանակներում, թույլ չտան վիրավորական արտահայտություններ այլ թեկնածուների, քաղաքական կուսակցությունների, նրանց անդամների վերաբերյալ: Նրանց ելույթները չպետք է պարունակեն սահմանադրական կարգի բռնի տապալման, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը, պետության անվտանգությանը վնասող, սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական, դասակարգային և ցեղայինատելություն քարոզող կոչեր: Վարողը կարող է ընդհատել նման ելույթները:

**15.** Համաձայն վերը բերված օրենքի՝ բոլոր հեռուստաբանավեճերը պետք է հեռարձակվեն ուղիղ եթերով: Առաջարկում ենք դա անել տեխնիկական հնարավորությունների ընձեռած որոշակի առավելագույն հապաղումով: Նշված հապաղումն անհրաժեշտ է կանխելու համար եթերում անպարկեշտ արտահայտությունների եւ կոպիտ անձնական վիրավորանքների հայտնվելը:

Համապատասխան հրահանգը պետք է համատեղ մշակեն ՀՌՀ-ն եւ Հանրային հեռարձակողի խորհուրդը՝ հաշվի առնելով միջազգային եւ տեղական դիտորդների, փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների ընթացքում հնչած առաջարկությունները:

**16.** Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված ռիսկերի առկայությունը հաշվի առնելով՝ խորհուրդ չենք տալիս ստուդիայում ունենալ հանդիսականների լսարան: Եթե հանրային հեռարձակողի ղեկավարությունը կրնդունի այլ որոշում, ապա այդ լսարանը պետք է ձեւավորվի համապատասխան բանավեճին մասնակցող քաղաքական ուժերին հավասար թվով տեղեր հատկացնելու սկզբունքով:

**17.** Հեռուստաբանավեճերին մասնակցող քաղաքական ուժերը իրազեկվում են դրանց անցկացման նշված եւ հնարավոր լրացուցիչ կանոնների հետ, իրենց համաձայնությունն են հայտնում եւ հաստատում ստորագրությամբ:

*2021թ. մայիսի 31*